

Թիւններէ հետեւեալ քաղաքացիական կրօնաբանութեան հետ տեսնուելէն զատ, շաբաթ օրը օգոստ. Սուլթանին ալ ներկայացաւ: Իտալական դեսպանն ալ մեծ Եպարքոսին հետ կ'տեսնուի. և տակաւին կ'պընդեն թէ հաշտութեան կամ զինադադարի յոյսերն բոլորովին անհետ եղած չեն:

— Նոր վառօդարանի մ'ալ շինութեան ձեռնարկուեր է, արդէն գտնուածներն բաւական չըլլալուն, և Եւրոպայէն երբեմն վառօդ առնուլ հարկ ըլլալուն պատճառաւ:

— Կարինէն հոկտ. 6/18 թուով առ լէվընդ Հէրբլտ գրուած նամակէ մը կիմացուի, թէ Շէյխ Ճէլալէտտին ապստամբելով կայսերական կառավարութեանէն՝ Տէրսիմի լեռները վտակեր է իւր հետ եղող 100ի չափ անձանց հետ:

— Հալէպի կուսակալութեան վիճակին մէջ Գիլիս գիւղաքաղաքէն մէկ ժամ հեռի գիւղի մը մէջ 213 օխայ ոսկի գտնուեր է, և Հալէպի ոստիկանութեան տեսուչն հոն զրկուեր է, պէտք եղած քննութիւնն ընելու համար:

— Շաբաթ երեկոյ մայրաքաղաքիս մէջ տարօրինակ յորդորութեամբ եկած անձրեւին հեղեղները այլևայլ կողմեր յորդելով բաւական նեղութիւն պատճառեցին հասարակութեան, և տեղ տեղ պատեր ու հին տուներ փլան: Նոյն երեկոյին, վասիլ անուն մէկը, գինով վիճակի մէջ Չէնկէլ գիւղ քացած ատենը հեղեղներուն մէջ ինկեր, և չկրնալով ելնել խեղդուեր է: Ղուզղունճուզի կողմերը շատ տուներ ողողուեր են. բայց բարեբաղդաբար մարդոյ կորուստ եղած չէ: Մեք ալ նոյն երեկոյին մեր գրասենեակէն մինչև կամուրջ երկու տեղ շարակ ելնել հարկադրեցանք: Բազմաթիւ ոչխար, կատու և շուն հեղեղներուն մէջ ընկղմեր են: Քեղաքաղաքի կողմերը երբեք ձիաւորք հեղեղներէն տարուեր խեղդուեր են:

— Օսմանլը երէկ ի լրոյ ծանուցած է, թէ Լեհաստանի ազատութեան համար Լեհաստանի մէջ կազմեալ մասնաժողովը շնորհակալութեան ուղերձ մը զրկեր է առ օգոստ. Սուլթանն, ներկայ պատերազմին համար, և յայտարարեր է թէ Նորին վեհափառութեանէն կ'յուսայ Լեհաստանի ազատութիւնը:

— Վասիլաքի Եւզվանիտի անուն յոյն ճարտարապետը ազգասիրաբար յանձնառեր է՝ յունաց մայր վարժարանը նորոգել՝ բոլոր ծախքն իւր անձնականէն հագալով: Սորա օրինակին հետեւի կ'հրաւիրեմք՝ մեր ազգային ձեռնհաս ճարտարապետները:

Սթանբուլը լրագրին գրածին նախելով Բէյլիայի շուրջը գտնուող ռուսական ու ռումանական զորութիւնը կը բաղկանայ՝ 106 վաշտ հետեակէ, 67 դուր ձիաւորէ, և 356 թնդանօթէ:

— Բումանիացիք մինչև ցարդ 7800 հոգի կորուսեր են, և Պուրքէշի երևելիք խնդրագրով մը աղաչեր են իշխանուհւոյն՝ որ դարձեալ պատերազմի զօրք չըրկելու համար իշխանին հաճութիւնն առնու: Բումանիոյ համար մինչև ցարդ այսպիսի զրոյցներ հրատարակուեցան: Չգիտցուիր, թէ մինչև որ աստիճան ըս-

տոյգ են: Ազգային ժողովոյ կողմարի տեսնե՞նք, թէ ինչ կ'լուսի:

— Պէրլինի և Վիեննայի գաղղիական դեսպանք փարիզ հրաւիրուած ըլլալով կ'կարծուի, թէ Գաղղիոյ կառավարութիւնը ի մօտոյ տեղեկութիւն պիտի առնու անոնցմէ՝ Աւսթրիոյ և Գերմանիոյ կառավարութեանց արեւելեան խնդրոյն համար ունեցած դիտարկութեանց վերայ:

— Անգղիական երկու զրահաւորք Բիրէ զրկուեր են, հելլենաց վիճակին վրայ ի մօտոյ տեղեկութիւն առնելու համար:

ՆԵՒԱԳՐԱԼՈՒՐՔ

- Փարիզ. 5 Նոյն- Նախարարաց ընտրութիւնն հետեւեալ կերպով եղաւ:
- Մ. Բուժէ-Բէրթիլէ՝ գլխաւոր նախարար և ելեւմտից.
- Պ. սը կէյ՝ ներքին գործոց.
- Տէլսօլ՝ դատական.
- Տը վօկէ՝ արտաքին գործոց.
- Տը Մօնկօլֆիլէ՝ հասարակաց շինուածոց.
- Տիւմաս՝ հասարակաց կրթութեան.
- Բլէման՝ առևտրական.
- Չօրապետ Պէրթօ՝ զինուորական.
- Եւզվապետ Ժէ. Բիլ-Տէսթուշ՝ ծովային գործոց:
- Ասոնց մեծագոյն մասը՝ ծերակուտի աջակողմէն են:
- Երէկ հանրապետականք 60 աթոռ ալ ունեցան՝ երեսփոխանական նոր ընտրութիւններէն:
- Օսմանեան դեսպան Արիֆի փաշա այսօր պաշտօնադրերը Մագ-Մահոն նախագահին ներկայացունելու առթիւ, յայտարարեր է թէ՝ օգոստ. Սուլթանը կ'փափաքի որ Գաղղիոյ և Օսմանեան պետութեանց մէջ ի վաղուց անտի հաստատեալ բարեկամական անկեղծ յարաբերութիւնք անխախտ մնան, և կ'մաղթէ որ Գաղղիա յաջող ու բարեբաւտիկ ըլլայ:
- Նախագահը խիստ յարգանք պատասխաներ, և խնդրեր է որ իւր շնորհակալութիւնները մատուցանէ օգոստ. Սուլթանին:
- Նաբօլի. 5 Նոյն- Միտհաթ փաշա այսօր Նաբօլի հասաւ:
- Պուրքէշ. 5 Նոյն- Օդոց գծնակութեան պատճառաւ, զօրավար Չիմմէրման յետաձգած է Սիլիսթրէի վրայ ընելու յարձակումն:
- Բէշթ. 4 Նոյն- Հունգարիոյ կառավարութիւնը պիտի յանձնէ՝ Ռուսիոյ վերաբերեալ երկաթուղոյ երկաթ գաւազանները:
- Պէրլին. 5 Նոյն- Մարաշխում վանկալ մեռաւ այսօր: Կայսրը հրամայեց համայն հրամանատարաց, որ բանակին մէջ ութ օր սուգ բռնուի:
- Բեդրսպուրկ. 3 Նոյն- Պէրլինի ռուսական դեսպանին կ'օրնի-Սթուլտէնի կողմէն ըլլալուն լուրն ստոյգ չէ:
- Վիեննա. 2 Նոյն- Ս. Հէնրի Լիօռ կըսպասուի հոս:
- Թրանսիլվանիոյ ոստիկանաց նոր զէնքեր տրուեցան, Աւսթրիոյ երկիրն անցնող ռումանական ասպատակներն հալածելու համար:

Վազըթ Բումէլիի կողմէն ալ Շէվքէթ փաշայի մէկ հեռագիրը կ'յիշէ, որով հաստատուած է եղեր կուրքօ զօրավարին մէկ քանի տեղէն վիրաւորուած ու մեռած ըլլալը:

Լէվընդ Հէրբլտ գրած է, թէ Շէվքէթ փաշա Ուրխանիյէ քաջուած է, և Բլէյլայի ու Ուրխանիյէի մէջ տեղը հեռագիրն խանգարուած է. սակայն այս մասին դեռ պաշտօնական տեղեկութիւն չկայ:

Լէվընդ-Հէրբլտի մէջ ուրիշ հեռագիրք ալ տեսնուած են Աղեկսանգրաբօլէն քաջուած, որ անհաւատալի կ'թըռուի: Հեռագրեր են, թէ հոկտ. 17/29 ին կարսի կողմը Գիւլիւք-Քէօյ ըսուած տեղը պատերազմ մ'ըլլալով՝ 5 ժամ տևեր է, և օսմանցիք 2000 հոգի կորուսեր, 4 թնդանօթ և բազում գերի տալով ետքաջուեր են: 18ին ալ առաւօտուն պատերազմ մը սկսելով, կարսի բերդին վերայ անձնատուութեան նշան եղող սպիտակ գրօջակ մը պարզուեր, և ռուսական բանակակերպներն մէջ բերդէն բանակցութեան համար գալիք օսմանցւոց կ'սպասուի եղեր:

Պասիքէթ տլ տեղեկութիւն կուտայ այս առաւօտ, թէ Անցերալները Անատոլի կայսերական բանակին համար Պօլսէն և ուրիշ կողմերէ ճամբայ հանուած 15 հազար զորաց 5000ը յառաջանալով՝ Պայպուրտն անցնելէն յետոյ ռուսաց պատահեր, և պատերազմի բռնուելով՝ ռուսք յիրուցան եղեր են, բայց օսմանեան զօրաց հետ գտնուող Բիֆաթ փաշա ալ վիրաւորուեր է: Այս զօրքը, կըսէ, արդէն Պայպուրտ գտնուող զօրաց վրայ աւելցեր է, և կ'սպասեն կրտսէն գալու վրայ եղող զօրաց: »

Նախարարք կ'չարունակեն յաճախ նիստ ընել և խորհրդակցել կարևորագոյն խնդրոց վրայ: Մեծ Եպարքոսն այս օրերս յաճախ կայսերական պալատը կեր-

Առայժմ կերելի, թէ երկու պատե-
րազմող տերութեանց մէջ մտնելը կարե-
ւի չէ:

Հունգարացի Գօշուդ ծանր հիւանդ է:
Պէլկրատ. 2 Նոյ- կըսուի, թէ ուս-
սիա զանց քրած է՝ Սերվիոյ իշխանու-
թիւնը պատերազմի մասնակից ընելն:

Սնկարելի կհամարուի՝ Սերվիոյ ուղած
փոխառութեան յաջողութիւնը:

Պուքրէշ. 1 Նոյ- Աղգային ժողովը
պիտի գումարի նոյ. 15ին, և կկարծուի
թէ շուտով պիտի ցրուի:

Երոստան Երեւան

Պէրլին. 25 հոկտ.— կըսուի, թէ կօր-
չագոֆ իշխանը ծանուցեր է Պէրլինի
ուսու դեսպանին, թէ Ռուսիա չպիտի
թողու զէնքը՝ մինչև որ Պոմպայի, Հէր-
սէքի և Դանուբի քրիստոնէից համար
քրած պահանջմանը չգործադրուին:

Լոնարա. 26 հոկտ.— Պէլկրատէն առ
թայմը հեռագրուած է, թէ սահմա-
նազուխը զրկուած զօրաց մէկ մասը ետ
առնուեցաւ, և Սերվիա մինչև գարուն
չպիտի մասնակցի պատերազմի:

Դարձեալ յիշեալ լրագրին հեռագրած
են, թէ կարս ումարկոնուելով մէկ մա-
սը այրեր է, և բերդին մէջ չորս ամբ-
ուան ուտելիք կայ:

Պէլկրատ. 24 հոկտ.— Նախարարաց
ժողովը որոշեց՝ դեկտ. ամսոյ մէջ գու-
մարել աղգային ժողովը:

Վիեննա. 22 հոկտ.— Պուլկարիոյ մէջ
երկաթուղւոյ մը շինութեան պիտի ձեռ-
նարկուի մօտերս: Այս ճանապարհաւ
պիտի միանան Զիշթօլա, Թրնօլա և
Բլէվլա:

Վիեննա. 24 հոկտ.— կհաւաստեն, թէ
Բ. Դուռը մերժեր է զինագաղարի հա-
մար եղած առաջարկութիւնը, նկատե-
լով թէ Պուլկարիոյ մէջ ուսու բանակաց
ձմերելը դիւրացունող պայմաններ կպա-
րունակէ:

Ռոստոֆ (կորչագոֆի ստորա-
գրութեամբ)

Զիշթօլ. 28 հոկտ.— Բլէվլայէն կծա-
նուցանեն, թէ երէկ շարունակած է
թնդանօթի պատերազմը: Կուրքօ զօրա-
վարն յառաջացած է դէպ ի Սօֆիա:
Սամանեան զօրաբաժին մը կուրքօյի հետ
պատերազմի մը մէջ երկու թնդանօթ
կորսնցուցեր է: (Լուր կայ, թէ ուսուաց
այս նշանաւոր զօրավարն վիրաւորուեր,
և չբժշկուելով՝ մեռեր է):

Պէլկրատ. 27 հոկտ.— Կուրքօյի՝ ձիա-
ւորաց հրամանատար ըլլալէն ի վեր, Բը-
լէվլա պաշար մտած չէ, և ուսուք Բլէվ-
լայի պաշարումն լրացուցած են՝ նոր հա-
սած օգնութիւններով:

Պուքրէշ. 29 հոկտ.— Կուրքօ երէկ
օսմանեան դիրքերը պաշարելով՝ երկու
ժամ ումարկոնուելէն յետոյ՝ օսմանցիք
անձնատուր եղան: Հագգը փաշայի հը-
րամանին ներքև գտնուող 7 վաշտ օս-
մանեան հետեակ զօրք երեք թնդանօ-
թով պատերազմի գերի եղան: 300 օս-
մանցիք փախան, Հագգը փաշա և 400
սպայք պիտի արձակուէին, բայց նոքա
պատերազմական գերի մնալ յանձն ա-
ռին: Ռուսաց կորուստը քիչ է. հետե-
ւակէն 1 սպանեալ 5 վիրաւոր, և ձիաւո-
րէն՝ 50 սպայ և 50 զինուոր սպանեալ ու

վիրաւոր ունեցած են: Ուրիշ կորուստն
դեռ յայտնի չէ:

Արշապատ Եւրոպայի հիւանդութեանը
(Շոք. րեւ. Բէ- 1221)

Այս հիւանդութիւնը երբ բերնին մէջ
ըլլայ, սմբակաց մէջտեղ գտնուածէն ա-
ւելի անվտանգ է, որովհետև թէոր
սմբակաց մէջտեղը գտնուի, ճանապար-
հաց տիղմերը, կենդանեաց աղբը, և
քաղցր սաստիկ ցաւ կպատճառեն, ո-
րով կենդանիք շատ կյոգնին և քիչ ժա-
մանակի մէջ կնիհարնան: Ասոր համար
ոչխարներուն կեցած փոռները՝ ընդար-
ձակ՝ մաքուր, օդաւոր, և պառկած
տեղերին գտնուող յարդը չոր ըլլալ
պէտք է:

Այս հիւանդութիւնը դեղով դարմա-
նել դժուար ըլլալուն, և որչափ քիչ դեղ
գործածուի, այնչափ յաջողութիւն ձեռք
ձգուելուն համար, զգուշութեան մի-
ջոյններու ձեռնամուկ ըլլալ լաւագոյն է:
Զգուշութիւն ընելու է, հիւանդները ի-
րարմէ զատելով, արածելու չզրկելով,
մինչև իսկ տարբեր ճամբայներէ նոյն
կամ ուրիշ տեղեր չզրկել, եթէ սոյն
ճամբայներն ու արօտները տղմուտ ըլ-
լան: Աւելի լաւ է՝ գէշ եղանակներու
ժամանակ մաքուր և օդաւոր փոռներ-
ու մէջ արգիլել, պառկած տեղերին
միշտ մաքուր պահել, և նորոգել: Զգու-
շանալու է, որ ոչխարք տենդէ և պըն-
դութեանէ չբռնուին: Ասոր համար պէտք
է ջրոյ հետ մէկտեղ ինչպէս Բուրի խառնել
և խմցնել: Կենդանիները օդաւոր ա-
խոռներու մէջ դնել, և կակուղ կամ ե-
փած դիւրամարս սնունդ տալ: Այս և
ուրիշ միջոցներով ժամանակին պահանջ-
մանցը համեմատ հոգ տանիլ անհրա-
ժեշտ է:

Ըսուած է, թէ քացախախառն ջրե-
րով, և մէջը քանի մը կաթիլ Բուրի քաղցր
(աօր + քրեթրի) աւելցուած ջրերով կա-
տարուած կօրօնները բերնին մէջ երե-
ւան ելած ուռոյցներուն բժշկութեանը
կ'օգնեն, բայց հօտը կազմող հազարա-
ւոր ոչխարներուն վրայ կատարել գըժ-
ուարին է: Լաւագոյնն է՝ հիւանդ կեն-
դանեաց սովորական ուտելիքին կէսը
տալ, և միանգամայն հոգ տանիլ որ
այս ուտելիքն ալ աւելի ջուր պարունա-
կող բաներ ըլլան և յաճախակի մեղրա-
խառն ջրեր, և կտաւատի եռացեալ ջուր,
և մէջը դարիի ախի դրուած ջրեր խըմ-
ցնել է: Ստինքներու վրայ գտնուած
ուռոյցները բաղրջուկի (էպէ կիւմէ-
ճի) ջրով լուալ և սերով և կարագ իւ-
ղով օժել պէտք է: Ոտքերու ուռոյցը-
ներուն համար ալ, ոտքերը կրի ջրոյ և
արջասպ (աօր Գըրքը) խառնուած ջրոյ մէջ
դնել հարկ է:

Եթէ հիւանդները շատ ըլլան, զա-
նոնք մէկիկ մէկիկ դարմանել դժուարին
և անկարելի ըլլալուն համար, հետե-
ւեալ կերպով գործ տեսնելու է. այ-
սինքն՝ ուռոյցները բացուելուն պէս,
վէրքը մաքրելու համար, կենդանիները
ջրի քով տանելու է: Բայց ձմեռը ա-
խոռներուն մէջ կրէ կամ արջասպէ խա-
ռըն ջուր պարունակող մեծ տաշտերու
մէջէ քաղցնել տալ հարկ է: Եթէ սըմ-
բակը անջատուած ըլլայ, մարմնոյն հետ

ալ յարաբերութիւն չունեցող սմբակաց
մասերը փրցունելու է: Եթէ կենդան-
եաց ոտքերը շատ գէշ և ողորմելի վի-
ճակի մէջ գտնուին, նոյն կենդանիները
մօրթել խելացութիւն է: Եթէ շուրջ ու-
րիշ անկարգութիւններ յառաջ չբերէ,
և պէտք եղած դարմանները ի գործ
դրուին, կենդանիները հիւանդութեան
երբէք զոհ չեն ըլլար:

Ոմանց կարծիքին նայելով՝ անգամ մը
շուրջ բռնուած կենդանիները մէյ մ'ալ
անոր ճանկը չեն կոխար, և ոմանք ալ կը-
սեն թէ, դարձեալ կրնան բռնուիլ: Սա-
կայն փորձով յայտնի կերելի թէ, ան-
գամ մը բռնուածները երկրորդ անգամ
ալ կը բռնուին. բայց այն ժամանակ ա-
ռաւել կը խմադրեն:

Հիւանդ մաքրներուն կաթին անվա-
տակարութիւնը բոլոր բժիշկներն ու ա-
նանաբոյժներն ընդունած չեն. կան ո-
մանք ալ որ հիւանդ կենդանեաց կաթին
և կարագին գործածութիւնը կարգի-
լեն, կամ թէ կաթին եռացմանէ վերջը
ուտուելուն թոյլատուութիւն կրնեն:

Շոքե բռնուած ոչխարաց միտք մինչև
հիմա մարդկային սեռին վնաս չտալուն
համար կրնայ ուտուիլ. բայց հիւանդ-
ները ծախելու համար տօնավաճառները
տանել մեծ ոճիր մ'է, որովհետև այս
պէսով հիւանդութիւնը կտարածուի:

Ախոռները համաճարակ հիւանդու-
թեանց վրայ խօսուած ատեն զուրցուա-
ծին պէս, մաքրել պէտք է: Եթէ շուրջ
ամբողջ մեծ հօտի մը բոլոր կենդանի-
ներուն վրայ տիրէ, այն ժամանակ հիւանդ-
ները երկար ատեն պահելու տաղտու-
թեանէն ազատելու և հիւանդութեան
տեւողութիւնը կարճաւատելու համար,
հիւանդ կենդանեաց բերնին մէջի ու-
ռոյցներուն պարունակած հիւթով ոչ-
խարները պատուաստելու է: Ասոր հա-
մար հիւանդ կենդանեաց թքովը առողջ-
ներուն բերնին մէջի երեսը չփել բաւա-
կան է:

Հիւանդութեան չտարածուելուն ամե-
նէն աղէկ միջոցը կենդանիները իրարմէ
զատելն է: Նաև հիւանդները դարմա-
նող հովիւներուն առողջներուն հետ ու-
նեցած յարաբերութիւնին կտրելու է:
Վերջապէս, ինչպէս որ անցեալ թերթե-
րուն մէջ քսած ենք, հիւանդութիւնը
երեւան ելածին պէս, տեղական վար-
չութեան իմացնելու է որ պէտք եղած
միջոցները ձեռք առնուին. որովհետև
շուրջ որչափ թեթեւ ըլլայ, կրնայ մեծնա-
լով ահարկու ըլլալ, և մեծապէս վնաս-
ել կենդանեաց տէրերուն:

Ռ. Իֆրեան

Ի Լ Ա Ն
ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԻՐԻ

Պէյդօղ տէպպաղխանէսինէ միւսպայ-
եա օլունաճագ երկիրմի պին գըյէ տուղ-
րա եանի աէպպաղխանէէրտէ իսթի-
մալ օլունան ֆրանսըզ եաղընըն թարի-
խի դօնթրաթօտան իթիպարէն պէհէր
մահ իքիշէր պին գըյէսի տէպպաղխա-
նէի մէզըիւրէ թէպիմ օլունարագ ար-
գասը ալընմագ, վէ մագպուղ սէնէտ-
լէրի թարիխէրինտէն իթիպարէն օ-
թուղ պիր կիւն միւրուրինտէ սիմ մէ-
ճիալիյէ երկիրմի զուրուշա, վէ մէճիտի-

յէ վերելմէն իսէ պօրսա ֆիյաթը իւն պիւ հիսապ ֆերգի իւն պերապէր գայ- մէ օլարագ նիզամիյէ խաղինէսինտէն վե- րելմէք շարթը իւն պէհէր գըյէսի սե- քիզ պուչուգ զուրուչա օլարագ թալի- պի հօհտէսինտէ օլուպ թըշընի եվվէլը բուսինին օթուզ պիւրինճի բաղար իրթե- սի կիւնիւ գարարը գաթիսի վերելմէն- յինտէն իթա իթմէյէ թալիպ օլանլէրին եհվմի մէգըիւրտէ տարը շուրայի ասքէ- րիյէ կէլմէլէրի :

25 Թըշընի եվվէլ 1877

Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի շահանէ Սարաճխանէ ան- պարընա՝ մէմհուրէն մահֆուզ պուլու- նան նուսուրէլէրինէ թաթպիգէն միւ- պայեա օլունաճագ օլան պին ատէտ պիւթիւն եաղը Սէմալ վէ մահալը սա- յիւրէ սաթիւյանը իւն, օն պին ատէտ եարըմ եաղը Սպարթա վէ Պուրտուր վէ Սէմալ սաթիւյանըն պէշ պին ա- տէտի թարիսի գօնթրաթտա հէման վէ գուսուրը եհթմիչպէշ կիւն գարֆըն- տա անպարը մէգըիւրէ թէսլիմ օլուն- մագ վէ մագպուզ սէնէտլէրի վիբուտին- տէ պէհասը իւզլիւք գայիմէ իւզ զու- րուչա օլարագ պէր վէճէր փէշին նիզա- միյէ խաղինէսինտէն վիբիւմէք շարթը իւն, պիւթիւն եաղըսընըն պէհէր ատէ- տի գըրգ զուրուչա, վէ եարըմ եաղը- սընըն պէհէր ատէտի օթուզ զուրուչա օ- լարագ թալիպի հօհտէսինտէ օլուպ թըշ- րինի եվվէլը բուսինին եհկիրմի տօգու- զընճը ճիւմաա իրթէսի կիւնի գարարը գաթիսի վիբիւմէն յինտէն իթա իթմէյէ թալիպ օլանլէրին եհվմի մէգըիւրտէ Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի :

25 Թըշընի եվվէլ 1877

Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի Շահանէ էլպիսէ անպարը իչուն միւպայեա օլունաճագ իւշ պին մէթրօ պօզ րէնկի ինկիլթէրա ապասը թարիսի գօնթրաթտան իթիպարէն օ- թուզ պիւր կիւնտէ թէսլիմէ պաշլանուպ օթուզ պիւր կիւն գարֆընտա թէսլիմ օ- լունմագ, եանի թարիսի գօնթրաթտան իթիպարէն ալթմըշ պիւրինճի կիւնիւնէ գատար արգասը ալընմագ, վէ մագ- պուզ սէնէտլէրի վիբուտինտէ պէհասը սիմ Մէհիտիյէ եհկիրմի զուրուչա, վէ Մէհիտիյէ վերելմէն իսէ՝ պօրսա ֆիյա- թը իւն պիւհիսապ ֆերգի իւն պերապէր գայիմէ օլարագ պէր վէճէր փէշին նի- զամիյէ խաղինէսինտէն վերելմէք շարթը իւն պէհէր մէթրօսը եհկիրմի պիւր զու- րուչա օլարագ թալիպի հօհտէսինտէ օ- լուպ թըշընի եվվէլը բուսինին եհկիրմի ալթմընճը շարշէնպիւհ կիւնի գարարը գա- թիսի վերելմէն յինտէն՝ իթասընա թա- լիպ օլանլէրին եհվմի մէգըիւրտէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի :

24 Թըշընի եվվէլ 1877

Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի Շահանէ էլպիսէ անպարըն- տա միւթերաքիւմ օն պէշ պին գըյէ- տէն եհկիրմի պին գըյէյէ գատար գըր- պընտը հէման մահալը մէգըիւրտէն ախզ օլընմագ, վէ պէհասը իւզլիւք գայիմէ իւզ զուրուչա օլարագ նադանէն վէ փե-

շինէն իյֆա գըլընմագ շարթը իւն պէ- հէր գըյէսի իւշ պըշգ զուրուչա թա- լիպի հօհտէսինտէ օլուպ թըշընի եվվէ- լը բուսինին եհկիրմի պէշինճի կիւնի գա- րարը գաթիսի վերելմէն ֆիյաթ օ- լունաճագընտան՝ տահա զիյատէ ֆիյաթ- լէ իշթիրասընա թալիպ օլանլէրին եհվ- մի մէգըիւրտէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի :

24 Թըշընի եվվէլ 1877

Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի շահանէ էլպիսէ իչին, միւ- թէահիւտլէրի թարաֆիլէրինտէն գօնթ- րաթօլէրինէ մահուպէն էլպիսէ ան- պարընա կէթիւրմէքտէ օլարգըլէրի հէր նէվի շուհա վէ սայիրէտէն էվրօբատան կէլմէնքէլէրին կէթիւրմէն իխրաճընտա պալեալէրի ալըմայարագ կէթիւրիւրուպ անպարընտա անպար մէմուրը վէ միւ- յէնէճիլէր հազըր օլուրուզը հալտէ էմա- նէթ մաղազարնտա քիւշատ իտիլմէսի, վէ շայետ իչլէրինտէ ալըգ պօզուգ պալ- եա զուհուր իտէրտէ գապուլ օլունմա- մասը, վէ մէգըիւր էմանէթ մաղազա- սընտա սալիֆ էզլիքը մէմուրլէր հազըր օլմատըգճա, թիւճճարտէն գաթիլէն մա- զաղայա տուխուլ իտէմէմէսի, վէ իչպու շուհա վէ սայիրէ մէմուրինի միւմայիլէյ- յիւմ մուվաճէհէսինտէ անալիզ իտիլմէ- տիքճէ անպարը մախսուտէ վաղ գըլըն- մամասը գատիմտէն պէրու ուսուրը միւթթէլէլէսի իճապընտան օլմալլէ- քէյֆիյէթ միւթէահիւտին մալիւմէլի օլմագ իւզրէ իլան վէ իչայէ օլունմըշ տըր :

4 Թըշընի եվվէլ 1877

Պապը Սէրասքէրի

ՏԵՔՍՐԻԱՅ

ՃԱՌ ՈՃՈՑ

ԵՒ ԲՆԱԶԱՆՅԱԿԱՆ

Խորհրդածո՞ւիւն :

Տէքարդ գաղղիացի մեծանուն փիլի- սոփային Գլուխ Գրքոյ է, որ Մեծ Առա- քել Շարապիւսեանի աշխատասիրու- թեամբ հայերէնի թարգմտուելով, Ար- մաշու վանքէն հրատարակուեցաւ գեղե- ցիկ տպագրութեամբ :

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ



ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԵՒ ԴԵՂՕՐԷԻՅ

Վ. Ծ Ա Ն Ն Ի

Բերա Մեծ փողոց Աղաճամի քիւ 77

Կ: Պոլիս կամուրջի հրապարակը քիւ 1-2

Երօպիոյ առաջին գործարանաց հետ յա- րաբերութեամբ, կապուած, և իւր գեղորէից

ընտրութեամբն և դնոց չափաւորութեամբ հըռ- շակուած :

Մակի մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քի- միագէտին շինած Ֆն. Լաիլէյն, որ փոքրիկ արէ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութե- ՚նէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն զըլ- խաւսը բժշկաց հաւանութիւնն ստացած :

Հոն կը գտնուի նաև : Գաւթ (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտըռ- ուի :

Սիւնիլ քը Բիլի, զուտ և մաքուր, Բէլ- թիէ, Տիոպօսը, Ժօպսթ և Էվանս Լէդէ ճար- տար քիմիագէտներէն պատրաստուած :

Չիւն Է-ը, զուտ Բրիսթիանայի Բէթկէր Մէլլէրի գործարանէն ելած :

Երէրէ (հիւսիսայ) Խահուէ, Լուսիս- պուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոք- սի ուժ տուող և ախորժակ բացող որ հա- տարակ խահուէի հետ խառնելով՝ զինը մեծա- պէս կիլիցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու :

Սրտ-էստակաւ ստացց ամեն ժամու մէջ : Տիւնիլ Զուր, մաքուր անվրայելի ներկ :

PILULE AHOOLWLY

ԴԵՂԱՆԱՅՏԻ ՀՈՒՆՈՒՆԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև լղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը : Սրտի և երկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաք- րելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնա- ւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ : Իւր դեղական մեծ ազդեցու- թեամբ սրտախառնութիւն, կուճուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, զլխի ցաւեր կը վանէ. մար- սողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաք- րուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ դանազան հիւանդութեանց սկզբնա- պատճառ կըլան, առողջ, ուժեղ, և բնական զիրքը կը գեղեցու :

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒՆՈՒՆԻ

Մորթային հիւանդութիւնը և վէրք բուժե- լու մասին ունեցած պալսամական յատու- թեանցը չհաւաարքի բնաւ ուրիշ գեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղց- կեղ (շերիփէնչէ), սրունից և ստեանց վէրքեր կամ բոլորսկին կանցնին և կամ կաւանան. օգտակար է նաև հարուրի, հաղի, սրտի բարախման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըստած հիւանդութեան : Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբ խոյլ (սըրահա) հիւանդու- թեան ազականիչ գորութիւնը ինչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմագրաւէ :

Այս գեղեցուրն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պոլսոյ գաղութային խանի կող- մերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի :

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ՝հե- ղինակն աօքթոր Հոլլուէի Ի Լոնտոն Օքընֆորտ փողոց թիւ 555 :

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՁԻ

- 1.—Փուշը 2ՈՐԵՇԱՐԹԻ և ՇԱՐԱԹ օրերը կը հրատարակուի :
2.—Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ մէհիւ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար :
3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժա- նորք կընդունուի :
4.—Տեղական ու գաւառական թղթատա- րութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :
5.—Հատը 60 փրայ է, և կը գտնուի ա- մեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով :
6.—Մանուցման տողը 3 զրուշ է մէկ ան- դամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի ան- գամներու համար :
7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Արաճաճեան, Կ. Պոլիս Արաճա-Համամ Խալի խան միջին յարկ թիւ 19 :

ՏԵՐՈՒՆ ԵՒ ՏԵՐ

Հ. Ս. ԱՆԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Դ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիզա փաշա խան քիւ 3